

Հաստատված է՝
«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
15.03.2019 թ. № 9 նիստի որոշմամբ
ԵՊԼՀ ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝
Կ. Վ. Հարությունյան



**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**

**ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) կառուցվածքային ստորաբաժանում է, որը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊԼՀ-ի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
2. Վարչությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԵՊԼՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊԼՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:
4. Վարչությունը կարող է ունենալ ԵՊԼՀ-ի խորհրդանշով ձևաթուղթ և դրոշմակնիք:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. Վարչությունը ենթարկվում է ԵՊԼՀ-ի ռեկտորին:
6. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում են ԵՊԼՀ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ԵՊԼՀ-ի ռեկտորի ներկայացմամբ:
7. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության ղեկավարը, որը պաշտոնում նշանակվում և պաշտոնից ազատվում է ԵՊԼՀ-ի ռեկտորի կողմից:

8. Վարչության ղեկավարը առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ԵՊԼՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ:
9. Վարչության աշխատակիցներն աշխատանքի նշանակվում և ազատվում են ռեկտորի հրամանով՝ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետի ներկայացմամբ:
10. Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության գործառույթները, աշխատակազմի մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:
11. Վարչության աշխատակիցները պատասխանատու են իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Վարչության գործունեության նպատակն է ապահովել հաղորդակցությունը և կապը օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ՝ ԵՊԼՀ-ի կապերը տարբեր կառույցների և հաստատությունների հետ զարգացնելու, տեսանելիությունը բարձրացնելու, ուսանողների շարժունությանը և գիտակրթական համագործակցությանը նպաստելու համար:
13. Վարչության խնդիրներն են՝
 - 1) ուսումնասիրել և սահմանված կարգով ԵՊԼՀ-ի ռեկտորին ներկայացնել առաջարկություններ արտաքին և միջազգային համագործակցության ձևավորման և հաստատման վերաբերյալ,
 - 2) նպաստել ԵՊԼՀ-ի կրթական ծառայությունների միջազգայնացմանը,
 - 3) օժանդակել միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների և թիրախային տարբեր խմբերի հետ կապերի հաստատմանը՝ ԵՊԼՀ-ի տեսանելիությունը բարձրացնելու, նոր ուսանողներ ներգրավելու նպատակով,
 - 4) նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի միջազգային շարժունությունը՝ համապատասխան փորձի փոխանակման, կարճատև և

երկարատև ուսումնառության, հետազոտությունների և ուսանողական պրակտիկաների կազմակերպման նպատակով,

- 5) նպաստել գիտահետազոտության և նորարարությունների խթանմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացմանը՝ ներգրավելով ԵՊԼՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը և համապատասխան ուսանողական ներուժը,
- 6) կապեր հաստատել Սփյուռքի հետ կրթական, գիտական և մշակութային ոլորտներում:

14. Վարչության գործառույթներն են՝

- 1) ԵՊԼՀ-ի ռեկտորի հանձնարարությամբ համակարգել ԵՊԼՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության ոլորտում աշխատանքների և ստանձնած պարտավորությունների կատարումը,
- 2) սահմանված կարգով ընթացք տալ արտաքին կապերի և միջազգային համագործակցության վերաբերյալ ԵՊԼՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկներին և ծրագրերին,
- 3) համակարգել ԵՊԼՀ-ի աշխատակիցների և օտարերկրյա հյուրերի պատվիրակությունների պաշտոնական այցերի հետ կապված աշխատանքները,
- 4) համակարգել պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների և հետազոտողների միջազգային շարժունության ծրագրերը,
- 5) կազմակերպել օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ժամանակավոր կացության քարտերի ձեռքբերման գործընթացը՝ ըստ սահմանված կարգի,
- 6) հավաքագրել և, ըստ անհրաժեշտության, տարբեր շահակիցներին տրամադրել ամբողջական տեղեկատվություն ԵՊԼՀ-ի կողմից իրականացվող միջազգային ծրագրերի, ստորագրվող փաստաթղթերի, համալսարանի միջազգային կապերի և դրանց ընդլայնման վերաբերյալ:
- 7) օգտագործել տեղեկատվության տարածման տարբեր ուղիներ՝ սեմինարներ, տեղեկատվական նամակներ, հրապարակված նորություններ և հայտարարություններ՝ ԵՊԼՀ-ի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և

- վարչական կազմին միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության, պարզաբանումների և առաջարկությունների տրամադրման նպատակով,
- 8) նախապատրաստել համագործակցության պայմանագրերի, նամակների, գրությունների նախագծեր՝ ուղղված օտարերկրյա և միջազգային կառույցներին, համալսարաններին, ՀՀ-ում դեսպանատներին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ համագործակցելով ԵՊԼՀ-ի այլ ստորաբաժանումների հետ,
- 9) համագործակցել ԵՊԼՀ-ի իրավաբանական բաժնի հետ՝ պայմանագրերի կազմման ընթացքում խորհրդատվություն ստանալու և պայմանագրերի նախագծերը մշակելու նպատակով,
- 10) ներկայացնել հաշվետվություն ռեկտորին ԵՊԼՀ-ի միջազգային կապերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի, դրանց զարգացման և արդյունքների վերաբերյալ՝ ըստ պահանջի,
- 11) համագործակցել ԵՊԼՀ-ի գերակա ուղղություններին համապատասխան համալսարանների և գիտական կենտրոնների հետ շարունակական համագործակցություն հաստատելու ուղղությամբ,
- 12) մշակել բուհի գործունեության միջազգայնացման ռազմավարություն՝ ըստ բուհի գերակայությունների, կրթական տարածքներին ինտեգրման գերակայությունների, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և համագործակցության այլ ուղղությունների:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Սույն կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից՝ ռեկտորի առաջարկությամբ:
16. Վարչության վրա չեն կարող դրվել ՀՀ օրենսդրությանը, ԵՊԼՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը հակասող պարտականություններ և գործառույթներ: